

35(357)
14.12.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՍԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԵՐԿՏՈՆ՝ ՈՉ ՄԻԱՅՆ ՕՐԱՆՈՒՅԱՅԻՆ

«Մեզ համար, սերունդների և բոլոր նրանց համար, ովքեր կցանկանան ապրել Արցախում, ընդունում և հռչակում ենք սույն Սահմանադրությունը»: Այսպիսի տողեր է պարունակում ԼՂՀ Հիմնական օրենքի նախաբանը՝ հիմնականում ունենալով մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, որոնք բարձրագույն արժեք են ճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Սահմանադրության ընդունումը նաև պատմական հայրենիքի ճակատագրի համար սեփական պատասխանատվության գիտակցումն է ներկա և ապագա սերունդների առջև, աշխարհասփյուռ հայության դրսևորած միասնության ոգեշնչումը:

Միայն ինքնիշխան պետությունները կարող են ունենալ սեփական սահմանադրություն, որովհետև դա համապարփակ առումով սոսկ փաստաթուղթ չէ, որ հաստատում է երկրի սահմանադրական կարգը: Այն նաև համաժողովրդական գրավոր երդման տեքստ է, որի տակ իբրև ստորագրություն՝ երկրի ամեն մի չափահաս քաղաքացի ԻՐ ՉԱՅՆՆ է դրել: Դրել է իր և զավիք սերունդների փոխարեն՝ որպես պայքարող ու մաքառումով նվաճված իրական հաղթանակ:

ԼՂՀ Սահմանադրությունը մեր ժողովրդի խտացված պատմությունն է՝ դաժան փորձություններում թրժված, հերոսական ու արժանապատիվ կենսագրությամբ: Երբ հեռավոր 1991-ի ղեկները 10-ին արցախահայությունը, ամստեսելով մահաբեր արկերն ու հրթիռները, համաժողովրդական քվեարկությամբ միաձայն «այո» ասաց Արցախի անկախությանը, դա ժամանակի միջով արված յուրօրինակ մեծիք էր ճակատագրին առ այն, որ պատրաստ է ամենայն դժվարություններ հաղթահարելու: Եվ այդպես էլ եղավ. կենցառ ու մահու կռվի ելած արցախահայությունը, վստահաբար ունենալով Մայր Հայաստանի և սփյուռքահայության աջակցությունը, կարողացավ հաղթել անարգ թշնամուն ու ոգևորությամբ ձեռնամուխ լինել պետականության լիարժեք կերտմանը:

Ընդամենը մեկուկես տասնամյակ անց՝ 2006-ի դեկտեմբերի 10-ին, Արցախի հաղթանակած ժողովուրդը ևս մի ուշագրավ առաքելություն իրականացրեց՝ դարձյալ հանրաքվեով միաձայն կողմ քվեարկելով ԼՂՀ Սահմանադրությանը: Հատկանշական է, որ այս երկու պատմարժեք իրադարձությունները տեղի են ունեցել միջազգային հանրության համար կարևոր նշանակություն ունեցող՝ Մարդու իրավունքների պաշտպանության օրը: Դա շատ խորհրդանշական փաստ է, քանզի մեր գոյապայքարի հիմքում ի սկզբանե ընկած էր արդարության, մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության գաղափարը: Այն շարունակում է ուղենիչ հանդիսանալ մեր հետագա հաջողությունների ամրագրման ճանապարհին:

Դեկտեմբերի 10-ն իրավամբ կրկնակի տոն է արցախցիներիս համար. տոն՝ ոչ միայն օրացուցային: Ժողովրդի կամարտահայտությունն այն կարևոր հարթակն է, որի վրա դրվում են ապագայի ամուր հիմքերը: Հենվելով դրանց վրա՝ միասին կառուցենք մեր պատերի երազած ապագան:

«ԼՍԱԿՐԹ»

ՆՈՒՌԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ԱՊԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ



ՆՈՒՌ Ժրագրի թիմը նորից Արցախում էր՝ նրա ղեկավար Սեբաստիան Արիսա Դյուվալի գլխավորությամբ: «Մենք հիմա ավարտին ենք հասցնում ՆՈՒՌ Ժրագրի այս տարվա վերջին փուլը՝ առաջին դասարանցիներին համակարգիչներով ապահովումն այն դպրոցներում, որտեղ արդեն երկու տարի առաջ իրականացվել է ՆՈՒՌ Ժրագիրը», - ասաց նա: Այսպիսով, Ստեփանակերտի և Շուշիի (այդ թվում՝ Քարին տակ գյուղի) դպրոցների շուրջ 800 առաջին դասարանցիներ ստացան ՄՈՒՌ համակարգիչներ: Իսկ երեք տարվա ընթացքում, ինչ Արցախում ներդրվել է ՆՈՒՌ Ժրագիրը՝ 5500 համակարգիչ:

Այս ուսումնականում ՆՈՒՌ-ի Ժրագրում ընդգրկվել են նաև հանրապետության բոլոր շրջակայքում: Սեբաստիան Դյուվալն ասաց, որ առայժմ համակարգիչներ ստացել են դասավանդող ուսուցիչները, որոնք ամռան ընթացքում նաև վերապատրաստվել են, իսկ երեխաներին համակարգիչները կտրվեն հաջորդ տարվա մարտ-ապրիլ ամիսներին:

ԲԱՅ ԴԱՄ՝ ՄՈ ՇԱՄԱԿԱՐԳՉԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

ՆՈՒՌ Ժրագրով նախատեսված է, որ տարվա կտրվածքով յուրաքանչյուր դպրոց կազմակերպի բաց դաս (դաս-պրոյեկտ)՝ ՄՈ համակարգիչների կիրառմամբ: Ստեփանակերտի հ. 2 և հ. 3 դպրոցներում արդեն անցկացվել են նման դասեր: Հերթականը հ. 5 դպրոցում էր՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայից: Ներկա էին մայրաքաղաքի դպրոցներից դասվարներ, կրթության բաժնից մասնագետներ, ՆՈՒՌ Ժրագրի համակարգող Մարգարիտա Գրիգորյանը:

Բաց դասը 4-րդ դասարանում էր՝ դասվար Գոհար Աղաբալյանի մոտ: Թեման «Փողն» էր: Ընտրությունը պատահական չէր, այս տարի հորեյանական է մեր հայկական դրամի համար, նրա 20-ամյակն է:



ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈԳԵՐԵՆ ԷՋՈ

«Պակասավոր է այն հայը, որ հայրենի պատմության իմաստասիրությունը, նրա հետագա զարգացման ուղիները հասկանալու համար չի վերապրել իր ժողովրդի ողջ անցյալը»:

Գարեգին Նժդեհ

«Ինձ ճանաչում է աշխարհը. ես հայ եմ», - հպարտորեն ազդարարեց 9-րդ «Ե» դասարանի աշակերտուհի Շողեր Սարգսյանը. - և մենք նորից անցանք մեր պատմության անթիվ-անհամար ուղիներով, որտեղ շատ են լուսավոր վերելքներն ու խավար վայրէջքները: Որտեղ շատ բանից է մեզ զրկել թշնամին, բայց Հր-հեղեղից հետո առաջին օջախի ծովը Մասիսի ստորոտին է երկինք բարձրացել, մեր լեռների պես մեր ոգին կանգուն է մնացել, միշտ մնացել ենք բարության, լույսի, ազնիվի ու մաքրության նվիրյալն ու առաքիչը: Մեզանից յուրաքանչյուրը պիտի իր երկրի պատմությունը լավ իմանա՝ իրեն իր երկրի հերոսական անցյալի տերը համարելու և նրա փառապանծ էջերով պարծենալու համար:

Դեկտեմբերի 9-ին Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի պատերի ներսում, հեռու Արարատից, Վանա ծովից, դարերից ու մագաղաթներից, բայց մոտիկ նորամանուկ Արցախին, նրա

երազների ու հավատի ճառագայթումին՝ ԼՂՀ Սահմանադրության տարեդարձին նվիրված «Պաշտպանված ենք սահմանադրությամբ, գիտենք մեր իրավունքները» խորագրով միջոցառման մասնակիցներն ու հանդիսատեսները հնարավորություն ունեցան թերթելու մեր պատմության փառապանծ էջերից մեկը, որտեղ ուսանելու շատ բան ունեցան:

ԼՂՀ Սահմանադրության և մարդու իրավունքների պաշտպանության օրվան նվիրված միջոցառման հիմնական բովանդակությունը խաղ-մրցույթն էր՝ 9-րդ «ա» և 9-րդ «բ» դասարանների միջև: Նրանք կրում էին, համապատասխանաբար՝ «Ղարաբաղ» և «Արցախ» անունները՝ կարծես ևս մեկ անգամ հաստատելով այն փաստը, որ հայրենասեր հայերի, հատկապես դարաբաղցիների համար Սահմանադրության ընդունումը դարավոր երազանքի իրականացման գրավականն է:

«Պաշտպանված ենք Սահմանադրությամբ, գիտենք մեր իրավունքները» վերտառությամբ բեմահարթակ են բարձրանում մրցույթի մասնակիցները. «Ղարաբաղ» թիմը՝ «Մեր գեները մեր իրավունքների լավ իմացությունն է», «Արցախ» թիմը՝ «Արցախը մերն է, մերն էլ կնմա» նշանաբաններով: Հնչում է ԼՂՀ հիմնը՝

երկու թիմերի միասնական կատարմամբ: Մրցույթի բոլոր մասնակիցները կրում են պետության խորհրդանիշները՝ ԼՂՀ պետական զինանշանը, դրոշը և «Մենք ենք, մեր սարերը» քանդակի պատկերը: Հաղորդավարները ներկայացնում են խաղ-մրցույթի մասնակիցներին՝ մշելով նրանց անհատական գծերը, կարողությունները, ձեռք բերած հաջողությունները, ձեռք բերած հաջողությունները: Ընտրվում է համեմատյալ մրցութային խաղի միավորները հաշվելու և հաղթողին որոշելու համար: Մրցույթն անց է կացվում երկու փուլով, յուրաքանչյուր փուլում հնչում է տասը հարց, մտածելու և պատասխանելու համար տրվում է մեկ րոպե:

Հարցերն ընտրված են ԼՂՀ Սահմանադրության ընդունման, նշանակության, մարդու իրավունքների, առանձնապես երեխային ընձեռված իրավունքների հանդեպ պաշտպանության՝ որպես մարդկայացման, վերաբերյալ: Հարցապատասխանների ընթացքը լիցքավորում է մեր՝ դիտորդներին, հետաքրքրությունը, հիշողությունը, թվում է, թե հնարավոր է մեր աշխարհատարած ժողովրդին հավաքել նույն հոգևոր երկնքի տակ և լինել հզորագույն...

ԼՂՀ Սահմանադրություն. նշանակալի իրողություն դարաբաղյան հիմնահարցում, մեծագույն քայլ անկախ պետականու-

թյան կառուցման գործում, իրանայական անհրաժեշտություն, որն ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին անցկացված հանրաքվեով՝ նրա ներկայիս պետական տարածքային ամբողջականության ամրագրմամբ: 1991թ. դեկտեմբերի 10. ԼՂՀ-ում անց է կացվել անկախության հանրաքվե՝ ժողովրդի ազատ քաղաքացիական շարժումը հիմնավորելու նպատակով: 1948թ. դեկտեմբերի 10. ՄԱԿ-ը ընդունել է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», ըստ որի՝ մարդու ազատությունն ու իրավունքները մեծագույն արժեքներ են, որոնք խթանում և երաշխավորում են հասարակական առաջդիմությունը, ըստ այդմ՝ Դեկտեմբերի 10-ը ողջ աշխարհը նշում է որպես մարդու իրավունքների պաշտպանության օր: Այս էլ թե՛ արցախցին, ուն արյան մեջ բարությունն ապրում, ծաղկում ու պտուղ է տալիս անհրաժեշտության թելադրանքով Մարդու իրավունքների միջազգային օրը նշում է իր ժողովրդի ինքնորոշման և պետականության կայացման միանգամից երկու տոն՝ անկախության հանրաքվեի և Սահմանադրության օրը, քանզի նրա գոյապայքարի հիմքում ընկած է մարդու իրավունքների պաշտպանությունը: Ինչպիսի՞ շիտակ ու արդարացի պատահականություն... 2

ՕՐԱԳԻՐ

ՇՆՈՐԱՎՈՐ ՀՈՐԵԼՅԱՆԴ, ԲԱՐԵԿԱՆՍ

Եմիլ Բալայանի ծննդյան 75-ամյակի առթիվ



Տասնամյակներ առաջ Արցախի դպրոցների ուսումնատեղի շրջանավարտների համար հասունության ատեստատ ստանալուց հետո կար ընտրության հնարավորություն՝ ուսումը շարունակել Հայաստանի, Արդեբեյջանի կամ խորհրդային այլ հանրապետությունների նախընտրելի որևէ քաղաքում կամ մեկնել ծառայելու բանակում և այն ավարտելուց հետո նոր միայն որոշել որտեղ մասնագիտություն ստանալ:

Ես 60-ականների այն շրջանավարտներից էի, որ նախընտրեցի ընդունվել Երևանի պետական համալսարան: Ուսումնական տարին սկսելու նախօրեին բարձր կուրսեցի և նոր ընդունված ուսանողները հնարավոր տրանսպորտային միջոցներով ժամանում էին Երևան: Հարողութի և Մարտունու շրջանի ուսանողների մեծ մասը նախընտրում էր մայրաքաղաք հասնել գնացքով, որը Հորադիզ կայարանով ամեն օր երթուղի էր իրականացնում:

Եմիլ Բալայանի՝ այն ժամանակ արդեն Երևանի պետական համալսարանի մեխանիկական տեխնիկական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողի հետ իմ ծանոթությունը կապակցվում էր Հորադիզ կայարանում՝ առաջին անգամ իմ ինքնուրույն Երևան մեկնելու առթիվ: Այդ պատահական ծանոթությունը սկիզբ դրեց արդեն ավելի քան կեսդարյան

մեր ընկերությանն ու բարեկամությանը: Պետք է ասեմ, որ այդ հարաբերություններն ունեին իրենց վաղեմի հիմքերը, որոնք դրել էին մեր մանկավարժ հայրերը՝ Վարդան Բալայանը և Սանջան Գուրգենիսյանը, ովքեր երկար տարիների գործընկերներ և ընկերներ էին:

Եմիլի և իմ փոխհարաբերությունները նոր որակ ստացան հատկապես 1990 թվականից հետո, երբ ես վերադարձա Ստեփանակերտ՝ ապրելու և աշխատելու: Այդ է պատճառը, որ ցանկություն առաջացավ իմ լավ ընկերոջ ու բարեկամի 75-ամյա հոբելյանի առթիվ հանդես գալ «Լուսարար» թերթում:

Եմիլ Բալայանը ծնվել է ԼԴԽՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1938թ., Արցախում հանրահայտ գրող, Հայաստանի գրողների միության անդամ, Աշան գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն, ուսուցիչ Վարդան Բալայանի և ուսուցչուհի Մանյա Իշխանյանի ընտանիքում:

Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում և 1954թ. ավարտել գերագույն գնահատականներով՝ Հետագայում ստացել է մանկավարժական բարձրագույն կրթություն: Ուսումնառությունը ավարտելով գերագույնության դիպլոմով՝ աշխատել է ԼԴԽՄ Մարտունու շրջանի եմիլյան, Հաղորտի և Աշան գյուղերի միջնակարգ դպրոցներում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, իրեն դրսևորելով իբրև բանիմաց, արհեստավարժ մասնագետ:

Մաթեմատիկայի ուսուցիչ լինելուց բացի է. Բալայանը բավական լավ շախմատ է խաղում: Շախմատի նկատմամբ նրա հակվածությունը լրացուցիչ հնարավորություն է ընձեռում մեզ հաճախ հանդիպել ԼԴՀ շախմատի ազգային ֆեդերացիայի կողմից կազմակերպված մայրաքաղաքի և շրջանների թիմային մրցություններում, որոնք անցկացվում են տարեկան առնվազն մեկ անգամ:

Ե. Բալայանի լավագույն հատկանիշները կրթական գործի կազմակերպման առումով ամենկատ չեն մնում, և 1978թ. նրան նշանակվում

են Մարտունու միջնակարգ դպրոցի տնօրեն, որտեղ աշխատում է ընդհուպ մինչև Արցախյան շարժման հզոր բռնկումը՝ 1988 թվականը:

1989թ. նա նշանակվում է հայրենի Աշան գյուղի կոլտնտեսության նախագահ: 1991-ին Շարժմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու մեղադրանքով ձերբակալվում է և շուրջ 9 ամիս պահվում Շուշիի և Բաքվի բանտերում՝ ենթարկվելով անցկարագրելի կոտանքների: Գտնվելով այդ անտանելի պայմաններում՝ Ե. Բալայանը, այնուամենայնիվ, մինչև վերջ անկոտրում է մնում և բանտից ազատվում փոխանակության միջոցով:

Ցանկացած անհատի հոբելյան մշել ինքնանպատակ չէ: Կարծում եմ, դա առավելապես առիթ է հոբելյարի և իր շրջապատի մարդկանց կողմից նրա կատարածը հիշելու, արժևորելու, մատաղ սերնդին հարողելու համար:

Այն, որ դեռևս ուսանողական տարիներից է. Բալայանի մոտ առավելագույն արտահայտված էին ընկերասիրությունը, բարյացակամությունը, հնարամտությունը, լավագույն արտահայտվել է դեռևս ուսանողական տարիներին:

Համալսարանի դասախոսներից շատերը, յուրահատուկ գիտելիքների պաշարի տեր մասնագետ լինելուց գատ նաև յուրօրինակ ու, որպես այդպիսին, անմոռաց անհատականություններ էին: Այդ շարքում առանձնապես աչքի էր ընկնում ծնունդով Աշանից պրոֆեսոր Աշոտ Մովսեսի Տեր-Սյրտյանը, որին ճանաչողները և նույնիսկ չճանաչողները Աշոտ Մասեիչ էին անվանում: Եմիլ Բալայանը և իր ընկեր Յենիկը Սյրտյանը բախտ են ունեցել լինել Աշոտ Մասեիչի ուսանողը և լսել «Տեսական մեխանիկա» առարկայից նրա դասախոսությունները:

Կիսամյակի ավարտին ընդունված կարգով երկրորդ կուրսեցիները պետք է այդ առարկայից քննություն հանձնեին: Աշոտ Մասեիչը համալսարանում պահանջկատ դասախոսի համբավ ուներ: Կուրսի ուսանողները, իմանալով, որ նա, որպես

դարաբաղցի, համերկացիների հանդեպ յուրահատուկ հոգատար և բարյացակամ մոտեցում ունի, հորդորում են Եմիլին ու Յենիկին գնալ նրա տուն և խնդրել բոլորի հանդեպ բարեհաճ վերաբերվի քննությանը՝ հնարավորություն տալով կրթաթղթակ ստանալ: Երկու ընկերներով որոշում են այն պահին գնալ պրոֆեսորի տուն, որ նա ճաշելուց լինի (նախապես գիտեին, որ Աշոտ Մասեիչի մայրն ապրում է որդու հետ և, նույնպես դարաբաղցի լինելով, շատ էր սիրում արցախյան ծագմամբ ուսանողներին): Հասնելով Տեր-Սյրտյանի տուն՝ սեղմում են զանգի կոճակը: Դուռը բացվում է, և դարաբաղյան տարագրվ մայրիկը հարցնում է՝ ի՞նչ եք ուզում: Եմիլը դիտարկելով դարաբաղյան բարբառով հարցնում է. «Այա, սա Աշոտ Մասեիչանց տունն ա՞»: Այան անմիջապես պատասխանում է. «Հա, ջանաձեք մատաղ, դարաբաղցե՛ք ը՞ք: Եկեք, Աշոտն էլ ա՛ նոր եկալ, հաց աստում»: Երբ տղաները մտնում են բնակարան, այան արթնները դնում է և իրավիճակը ճաշելու: Երևանում շատերը, եթե ոչ բոլորը, գիտեին, որ Աշոտ Մասեիչը, լավ դասախոս լինելուց բացի, նաև կերուխումի վարպետ է: Անմիջապես տղաների բաժակն օդի է լցնում, և միասին սկսում են կերուխումը: Որոշ ժամանակ անց տղաների թե՛քը լավանում է և, մոռանալով ինչի համար են եկել, առանց պրոֆեսորին որևէ խնդրանքով դիմելու, ինչպես ասում են՝ ձեռնունայն վերադառնում են: Համալսարանից հեռացնում են հաջորդ օրն էլ գնալ Ա. Մասեիչի տուն՝ «խոսելու»: Եմիլը և Յենիկը հաջորդ օրն էլ են արժանանում նույնպիսի ընդունելության: Այս անգամ ևս, ինչպես առաջընթացումը չկատարած, ընկերներին խոստանում են հաջորդ օրը գնալ և խնդիրն անպայման լուծել: Հերթական այցին հենց այան բացում է դուռը՝ պրոֆեսորը սեղանից ելնում է և հենց դռան մոտ ասում. «Ա լավտներ, ձեր մատրիկուլները պրեքեք, հինջու պետք ա տոնին, թե՛ չ տուք մեր տանը շատըք հաց ուտելու»: Եվ այսպես, է.

Բալայանը և Յ. Սյրտյանն ամբողջ կուրսի ուսանողներին «արժանացնում են» սպասված դրական գնահատականների:

Նմանատիպ դրվագներ է. Բալայանի կյանքից շատ կարելի է ներկայացնել, սակայն ընթերցողի համբերությունը չչարաշահելու համար բավարարվեմք այսքանով:

Ե. Բալայանն ունի 52 տարվա մանկավարժական ստաժ, հեղինակ է մաթեմատիկայի 3 գրքի:

Նա գերդաստանի նահապետ է՝ սիրող ամուսին, հոգատար հայր, խանդավառացող լեցուն պապ: Կինը՝ Բելա Սկիպանը, արդեն կենսաթոշակի անցած վաստակաշատ ուսուցչուհի է՝ 48 տարվա մանկավարժական ստաժով, որին՝ գեներալ-մայր Վարդան Բալայանը, Արցախյան ազատամարտի վետերան, ներկայումս ԼԴՀ Պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալ, դուստրը՝ Մանուշ Բալայանը, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի է Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցում:

Անվանի մանկավարժի աշխատանքը բարձր է գնահատվել հայրենի պետության կողմից. նրան շնորհվել է ԼԴՀ վաստակավոր ուսուցչի կոչում: Բացի այդ, նա պարգևատրվել է ԼԴՀ «Արիության համար» և «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով, իսկ վերջերս էլ հոբելյանի առիթով՝ ԼԴՀ Ազգային ժողովի պատվոգրով և ԼԴՀ վարչապետի հուշամեդալով:

Ինչ խոսք, Ե. Բալայանի կյանքի ու մանկավարժական գործունեության գլխավոր գնահատանքն այն հարգանքն ու պատիվն է, որ նա վայելում է հայրենի գյուղում, շրջանում, ամբողջ Արցախում, այն խոր երախտագիտությունը, որ նրա նկատմամբ տածում են իր կրթած ու դաստիարակած հարյուրավոր սաները:

Արպար ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մանկ. գ. դ., ԱրՊՀ պրոֆեսոր
ԼԴՀ Աժ մշտական
հանձնաժողովի նախագահ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՉԵՐԵՆ ԷՋՈ

Տարողունակ, ուսանելի, ազգային ինքնագիտակցությամբ լի մրցույթը համեմվեց «Ղարաբաղ իմ» երգով, «Հայ աղջիկներ» պարով, ասումնաբանություններով: Ինքնատիպ էր մրցույթի ավարտը: Մրցութային հանձնախմբի անդամները՝ Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդակցության Սուրեն Գարաբյանը, Մարդու իրավունքների պաշտպանության աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Լիլիթ Պողոսյանը և դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը որոշեցին, որ 2-րդ փուլի վերջին՝ «Ո՞վ եմ ես, որտեղի՞ց եմ եկել» հարցի շուրջ պետք է մրցեն թիմերի ավագները՝ Շողեր Սարգսյանը և Ատոմ Խաչատրյանը: Հայրենիքի հանդեպ ունեցած իրենց սերն ու վատախոսությունը նրանք արտահայտեցին պատանեկան հուզառատությամբ, պարուրեցին մեզ իրենց հպարտությանը և անկեղծությամբ:



Հանձնախմբի անդամները, հայտարարելով երկու փուլերի արդյունքները, հաղթող ճանաչեցին «Ղարաբաղ» թիմին: Իսկ խաղ-մրցույթի ամենակատիվ մասնակիցը համարվեց 9-րդ «բ» դասարանի աշակերտ Ատոմ Խաչատրյանը: Հաղթողները պարգևատրվեցին պատվոգրերով:

Դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը շնորհակալու-

թյուն հայտնեց 9-րդ «ա» և «բ» դասարանների աշակերտներին, պատմության ուսուցիչներ Կ.Պետրոսյանին, Ժ.Աբրահամյանին և Լ.Ավանեսյանին՝ մշելով, որ նման միջոցառում կազմակերպելը և հաղթանակ է: «Ազգային պարի, երգի և բանաստեղծության հուզառատ ելևէջները պարտավորեցնում են, որ միայն հաղթանակներով պիտի հաղթեք, իմանալով մեր պատմությունը՝ ճիշտ ապրելու և հաղթելու համար»: Շնորհակալություն հայտնելով մրցութային հանձնախմբի անդամներին՝ տնօրենն անթաքույց հպարտությամբ ասաց, որ նրանք՝ Սուրեն Գարաբյանը և Լիլիթ Պողոսյանը 7-րդ դպրոցի շրջանավարտներ են և իր լավագույն աշակերտները:

Հնչում է արցախցի բանաստեղծ Ռեբերտ Եսայանի «Սահմանադրության օր» բանաստեղծությունը՝ 9-րդ «բ» դասարանի աշակերտ Ատոմ Խաչատրյանի ասումով:

...Հոգի՛ր է երգով ու ազատությամբ
Քո ամեն օրը, երկիր իմ Արցախ,
Քո ամեն հույսը՝ նավ երջանկության,
Անունդ սե՛ր է և հարություն ժամ,-
Երկիր իմ Արցախ, հավատ անսասան,
Որ օրհնված է Աստծո բարձունքից,
Որ օրհնված է Սահմանադրությամբ,
Հոգի՛ր ես երգով և ազատությամբ:

Այդ, ոչ մի թշնամի այլևս չի կարող ընկնել մեզ՝ արցախցիներիս ...

Ամժեյա ԱՐԲՈՒՅԱՆՆԵ
Ստեփանակերտի հ. 7 դպրոցի հայոց
լեզվի և գրականության ուսուցչուհի

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍ-ՄՐՅՈՒՅՈՒՄ «ԳԻՏՈՒՆԻԿ»

Որո՞նքն են հաջողությունը երեխայի ներքին ուժերի միակ աղբյուրն է, որը ծնունդ է ղվարությունները հաղթահարելու եռանդ, սովորելու ցանկություն:

Վ. Սուխոմլինսկի

Սովորողների արտադասարանային ժամանակը նպատակային ու բովանդակալից կազմակերպելու համար հետաքրքիր միջոցառում է կազմակերպել Հացու հիմնական դպրոցի բնագիտական առարկաների մեթոդավարժման նախագահ Սուսաննա Սաֆարյանը:

5-7-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ անցկացվեց «Գիտունիկ» ինտելեկտուալ խաղ-մրցույթը: Դասարանում կատարված ուսումնական աշխատանքի շարունակությունը հանդիսացող միջոցառման ընթացքում երեխաները, հենվելով իրենց ունեցած գիտելիքների ու կարողությունների վրա, կարողացան ինքնուրույն գործադրել յուրացրածը, միաժամանակ գտնել լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելու միջոցներ:

Միջոցառման նկատմամբ լսարանի հետաքրքրությունն ու ակտիվությունն ապահովելու նպատակով

թիմի ավագները խաչբառերի օգնությամբ առաջարկեցին որոշել թիմերի անունները: Ի պատիվ լսարանի՝ պետք է ասել, որ առաջադրանքը հաջողությամբ կատարվեց: «Աստղիկ» և «Շանք» թիմերի միջև ջերմ ու անկաշկանդ մրցույթում ծավալվեց մրցույթ:

Հարցերն ընտրվել էին բնագիտական առարկաներից ու պատմությունից: Ընդ որում, հաշվի էին առնվել մասնակիցների ցանկությունները, հակումները, տարիքային ճանաչողական առանձնահատկություններն ու նաև նշված դասարանների համար նախատեսված կրթական չափորոշիչները:

Միջոցառման ընթացքում թե՛ երեխաները, թե՛ մասնակիցները դրական հույզեր և հոգեկան բավականություն ստացան:

Կարևորվեցին մրցույթի մասնակից յուրաքանչյուր երեխայի ներկայությունը, հանձնարարությունը կատարելու ջանքերը, ընկերների, ուսուցիչների, ծնողների առջև հաշվետու լինելու պատասխանատվության գզացումը ձևավորումը:

Սուսաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հացու հիմն. դպրոցի տնօրեն

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ՄԻԱՍԻՆ

Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում այս ուսումնական հարյուրամյակին...

խաները տիրապետում են մաթեմատիկական պարզ հասկացություններին...

պատասխանում էին ձեռք բարձրացնելով: Նշվեցին նաև համագանգներ, որոնք պարտադիր պահանջ են: Գ. Գրիգորյանն առանձնապես բանավոր խոսքի կարևորությունը...



Դաստիարակների մի զգալի մասը նորանշանակ է: Խմբերում տարվող աշխատանքները վերահսկելու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի՝ գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանի գլխավորությամբ...

Պարապմունքը քննարկելիս բոլոր մասնակիցներն արտահայտեցին իրենց կարծիքը: 3. 10 դպրոցի կրտսեր օղակի գծով տնօրենի տեղակալ Զ. Հովսեփյանի տեսակետով՝ գնահատելի է դաստիարակչուհու՝ ամեն ինչ խաղի միջոցով...

Դասը համարվեց ուսանելի: Երիտասարդների խստովանությամբ՝ իրենց հետ շատ բան կտանեն: Մեկ նկատառում. պարապմունքն անցկացվեց ոչ տվյալ, այլ՝ 6-ժամյա ռեժիմով...

«ՄԻՒԹԱՐ ՍԵՔԱՏԱՆՅԻ» ԿՐԹԱՆԱՄԱԽԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՉ

Ինչպես արդեն ասել ենք, Աշոտ Բլեյանի «Միութար Սեքստանյի» կրթահամալիրը բաղկացած է 8 դպրոցներից, որոնք իրականացնում են նախադպրոցականից մինչև արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն: Այդ շենքերը բոլորն էլ խորհրդային տարիներից են կառուցված, և նրանցից միայն մեկը, որը նրանց մայր դպրոցն է, եղել է տիպային դպրոց, մյուսները մանկապարտեզներ էին: Դրանց նախկին տեսքից ոչինչ չի մնացել, բոլորը ձևափոխված են: Փոփոխությունները հիմնականում վերաբերում են այն բանին, որ շատ պատեր քանդել են միասնական տարածք են ստեղծել: Իսկ շատ դեպքերում էլ պատերը փոխարինված են ապակե միջնորմներով, և ամբողջ դպրոցը թափանցիկ է: Այդ փակ չլինելը ամեն ինչ դարձրել է տեսանելի: Ութ դպրոցներից հինգում (հինգերորդը նրբամտերին է բացվել՝ արհեստների դպրոցում) կա մանկապարտեզ: Թեկուզ այդպես, նրանցից միայն մեկն է կոչվում դպրոց-պարտեզ, մյուսները՝ կրտսեր, միջին, հիմնական և ինչպես ասացինք՝ արհեստների դպրոց (նույն շենքում կա նաև գեղարվեստի բուլեջ):

Ընդհանրապես, երբ Աշոտ Բլեյանը համախոհների հետ սկսեց իրագործել իր նորարարական մտահղացումները 1984թ. Երևանի «Բանգլադեշ» թաղամասի իր տնօրինած հ. 184 դպրոցում, սկսել է հիմքից՝ մանկապարտեզից: Նրա խոսքով, երկու-երեք տարեկան երեխաների ծնողներին, որոնք երիտասարդ լինելով՝ ավելի հեշտ կրճակեին նորարարությունը, դյուրին կլինեի համոզելը: Գլխավոր պատ-



ԲԱՅ ԴԱՄ՝ ԽՕ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԿԻՐԱՄԱՐ

Դասարանի կախավորումից՝ համապատասխան պատահաններ, դիդակտիկ այլ պարագաներ, ասույթներ և անմիջապես կազմակերպչական մասից՝ մուտքից զգացվում էր, որ մանկապարտեզում մեծ աշխատանք է կատարվել, և որ ներկաներն ականատես են լինելու դաս-ներկայացման: Սկզբում ուսուցչուհու հարցերի տարափի միջոցով երեխաները պատկերացում տվեցին «ես և շրջակա աշխարհը» առարկայի, նրա ուսումնասիրության օբյեկտի՝ բնության մասին, որի ամենակարևոր բաղադրիչը մարդն է, ով բացահայտում է բնության գաղտնիքները: Բացահայտում է, որպեսզի պահպանի և օգտագործի ինքը և հետագա սերունդները՝ իրենց կարիքները բավարարելու, նպատակներին հասնելու համար: Կարիքները բավարարում են ապրանքներ ձեռք բերելով, որը մարդկության արշավույթն է կատարվում էր միմյանց հետ ապրանքներ փոխանակելով: Երեխաները շատ կարճ ներկայացրին այդ տեսարանը՝ իբրև շուկայում երկու գյուղացիներ, ովքեր իրենց ունեցած բերքը փոխանակում են: Այսպես աստիճանաբար հասան ամենակարևոր ապրանքին՝ փողին, որն ապրանք ձեռք բերելու ամենահարմար ձևն է: Ուսուցչուհին պրոյեկտորի միջոցով ցուցադրեց դրամի պատմությունը՝ որտեղ է առաջին անգամ հատվել, մետաղադրամի տեսակները՝ արծաթե դրամ, ոսկե դրամ, պղնձե դրամ: Հայաստանում մեզ հայտնի են Տիգրան Մեծի, Արտավազդ 2-րդ և մյուս թագավորների պատկերներով դրամներ: Գնալով տեխնիկական զարգացում է, շրջանառության մեջ են դրվում թղթադրամները: Յուրաքանչյուր պետություն ունի իր դրամական միավորը՝ դրամ, ռուբլի, դոլար, եվրո և այլն: Դասից նաև անակնկալ մատուցվեց. ներս բերվեց «բանկոմատը», որով աշխատավարձ են ստանում: Այնուհետև աշակերտները ցուցադրեցին իրենց գիտելիքները՝ գտնելով այն հարցերի պատասխանները, որոնք տրված են դասագրքում. դրանք վերաբերում էին փողին և նրա կիրառությանը: Տեքստը գործարանի մասին էր: Երեխաները վերիիջեցին այն գործարանները, որտեղ էր արտադրվում և գնացել՝ հացի, կաթի, «Արցախֆուր»: Նշեցին հենակետային բառերը, ընտրեցին իրենց ընթերցած հատվածների վերնագրերը: Կազմեցին աբրուստիկոս «փող» բառով: Այնուհետև կատարեցին խմբային աշխատանք: Բաժանվեցին «Դրամ», «Դոլար», «Ռուբլի», «Եվրո» խմբերի՝ հետաքրքիր մշանաբաններով, որոնցից յուրաքանչյուրը մի ասույթ է. «Առողջություն կորցրիր՝ ամեն ինչ կորցրիր», «Փողը թռչում է, թռչում գալիս է, թռչում գնում է»: «Ժամանակ կորցրիր՝ ամեն ինչ կորցրիր», «Փողով կարող ես դիրք գնել, բայց ոչ՝ հարգանք»: Երեխաները Wi-Fi-ի միջոցով մտան համացանց, գտան դրամի օրվա փոխարժեքը: Բազմաբնույթ էր համակարգիչների օգտագործումը՝ թուքս փեյժ, համացանց, «գրել գործունեություն», «լաբիրինթոս», «հիշել»:

Դասն անցավ ԽԻԿ (խթանում, իմաստավորում, կշռադատում) համակարգով, օգտագործվեցին ԳՈՒՄ (գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի) մեթոդը, պրիզմա, մտազորի հնարները: Դասն ինտեգրվեց մաթեմատիկա, մայրենի, պատմություն, ինֆորմատիկա, երաժշտություն, նկարչություն առարկաներին: Դասապրոցեսը աշակերտակենտրոն էր. նոր նյութը հարողովեց երեխաների օգնությամբ: Օգտագործվեց նաև պրոյեկտորը: Երեխաները ծանոթացան տնտեսագիտական մի շարք հասկացությունների, իմացան, որ իհարկե, լավ ապրելու համար փող է անհարժեշտ, որը պետք է ձեռք բերել ազնիվ, քրտնաթոր աշխատանքով, գիտելիքների կիրառմամբ, բայց այն ամենակարևոր բանը չէ աշխարհում, քանզի նրանով

չես կարող գնել առողջություն, հարգանք, սեր, բարեկամություն և շատ այլ արժեքներ: Ուսանելի դաս-ներկայացում էր, որն ըստ արժանավույն գնահատեցին ներկաները: Նախ ուսուցչուհի Գ. Աղաբալյանը արտահայտվեց շնորհակալություն հայտնելով դպրոցի կուլեկտիվին՝ ինֆորմատիկայի ուսուցչուհուց մինչև մյուս առարկաների մասնագետները՝ իրեն օժանդակելու համար՝ ասելով, որ ինքը միայնակ չէր կարող հասնել հաջողության: Գնահատելի է, իհարկե, ուսուցչու երախտագիտության գզացումը, որը խոսում է նաև դպրոցի համերաշխ, իրար սատարող կուլեկտիվի մասին: Համաքաղաքային դասին ներկա էին փորձառու, նաև՝ սկսնակ դասավարներ: Բոլորի խոսքում այն միտքն արծաթովեց, որ ուսուցչուհին շատ ջանք ու եռանդ է թափել, նախապատրաստական մեծ աշխատանք կատարել: Ի դեպ, դասից առաջ նա երեխաներին էքսկուրսիա էր տարել «Արցախբանկ», իսկ «բանկոմատի» գաղափարն իրագործելը, խստովանեց, շատ աշխատատար է: Փորձառու դասավար Ռիտա Պողոսյանը, ում մասին Գ. Աղաբալյանը ասաց, որ նրա «փեշից բռնած» գնում է, առանձնացրեց ուսուցչուհու պրպտող, նպատակասլաց բնավորությունը: «Պրպտող, ձգտող, աշխատասեր, գործընկերների հետ համագործակցող, պարտքի ու պատասխանատվության գզացումով, այս հատկանիշները ուսուցչուհուն միշտ նպատակին կհասցնեն»,- ասաց նա: Ներկաները համամիտ էին նաև այն հարցում, որ համակարգչի օգտագործումը հնարավորություն է տալիս դասապրոցեսը դարձնել ավելի հետաքրքիր: Ի դեպ, ուսուցչուհին դասը մի քանի օր անց կրկնեց ՆՈՒՌ ծրագրի ղեկավար Սեքստանյան Արիաս Դյուվալի ու նրա թիմի համար:

վիրատուն հասարակությունն է. երբ նրա կողմից կա պահանջումը, մյուս հարցերը կարգավորելը դժվար չէ: Կրթահամալիրում մանկապարտեզ հաճախում են երկու տարեկանից: Կան երկու տեսակի խմբեր՝ հինգ տարեկանների և խառը: Երբ հարցրինք, թե երկու տարեկանները հատուկ ծրագիր կամ սննդակարգ ունեն, Ա. Բլեյանը պատասխանեց. «Իսկ ընտանիքներում նրանք առանձին են»: Փոքրերը միշտ ձգտում են մեծերի հետ լինել, և այդպես ավելի հետաքրքիր է: Հինգ տարեկանները հունվարից տեղափոխվում են առաջին դասարան, իսկ սեպտեմբերից՝ երկրորդ: Այստեղ մեկ տարի շուտ են ավարտում դպրոցը՝ 17 տարեկանում: Ոչ մի մանկապարտեզում մահճակալ չտեսանք: Դրանք ավելորդ տեղ են զբաղեցնում և ավելորդ ծախսեր պահանջում: Դրանց փոխարեն ընդարձակ խմբասենյակների մի անկյունում տեսանք գունավոր, մարգագույն հիշեցնող գորգեր՝ ներքնակներ (մատրասներ)՝ իրար վրա դասավորած: Ֆիզկուլտուրայի պարապմունքի ժամանակ քաշում-հանում են, և վրան երեխաները զլուխկոնոն են տալիս, հետո հավաքում-դասավորում: Իսկ երբ հասնում է քնի ժամը, նորից շարում են հատակին՝ վրան յուրաքանչյուրը փռում է իր անկողինը, որը պահվում է նույն խմբասենյակում գտնվող պահարաններում և բնում: Այնքան հետաքրքիր էր այդ տեսարանը: Մի խմբում դրան կականատես եղանք: Երեխաներն արդեն պառկել էին հատակին փռված ներքնակների վրա: Հնչում էր մեղմ ու հաճելի երաժշտությունը, իսկ երկու դաստիարակներ երեխաների արանքներով ոտքերի թաթերի վրա ոտաթոթիկ անձայն քայլելով՝ ծածկում կամ փաղաքշելով քնեցնում էին նրանց: Եվ այդ ամբողջ ժամանակ, երբ երեխաները քնած էին, նրանք նրանց հետ էին: Ավանայից համեմատություն են անում: Թե ինչպես մեզ մոտ շատ դեպքերում մանկապարտեզը չի գործում, ինչ է թե՛ գույք չկա: Ի միջի այլոց, կրթահամալիրի գույքը նրանք պատրաստում են իրենց արհեստների դպրոցում: Ինչպես ասացինք, ամեն ինչ այստեղ տեսանելի է: Ասանհանգույցն էլ է խմբասենյակի մի անկյունում՝ դարձյալ թափանցիկ միջնորմով անջատված: Ինչպես դպրոցում է, այնպես էլ այստեղ երեխաները գալիս են իրենց գործիքով՝ նեթերով: Բոլոր խմբասենյակներում պրոյեկտոր կա, իսկ Wi-Fi կապի միջոցով համացանցը ոչ թե մի անկյունում է, այլ՝ ամեն տեղ: Պարապմունքի մի մասն անցկացվում է համակարգչով: Կարտկեսների միջոցով երգեր են սովորում, ուրախ անգլերեն կան ռուսերեն, խաղեր խաղում: Այստեղ երեխաներին վաղ հասակից մասնակից են դարձնում հասարակական աշխատանքին: Երբ մեք այնտեղ էինք, հայտարարված էր կրթահամալիրի տարածքի բարեկարգման միամսյակ: Յուրաքանչյուրի համար տարածք էր առանձնացված: Շաբաթ օրը, որը ազատ օր է կոչվում, փոքրիկներին իրենց ծնողների հետ տեսանք դպրոցի բակում բախերով աշխատելիս:

ՂԱՍԱԼՈՒԲՄ

ԱՅՍ ԱՆՉԱՍ ԷԼ ՆՈՐԱԳՅՈՒՂՈՒՄ

Մեթոդական աշխատանքի կազմակերպման կարևորագույն ձևերից են բաց դասերը, որոնք հիմնականում պարունակում են նորություն՝ ինչպես ուսումնական նյութի բովանդակության, այնպես էլ նրա ուսումնասիրման մեթոդներում: Անշուշտ, ուսուցիչ գիտամեթոդական պատրաստվածության բարձր մակարդակն է ապահովում այդ նորության առավելության ցուցադրումը:

Վերջին տարիներին իրենց գործին նվիրված, հմուտ, փորձառու ուսուցիչների մոտ բաց դասեր անցկացնելու և երիտասարդներին նման միջոցառումներին հաճախակի ներգրավելու նախաձեռնությունը Ասկերանի շրջանում իր վրա է վերցրել կրթության շրջանային բաժինը (պատասխանատու՝ բաժնի գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյան):

Այս անգամ էլ (նախորդ անգամ՝ հոկտեմբերի 30-ին, Ավետարանոցի միջնակարգ դպրոցում), նոյեմբերի 20-ին, շրջանի տարբեր գյուղերի դպրոցների (Սղնախ, Խնձրիստան, Խանգե, Պատարա, Այգեստան, Խմապատ, Իվանյան) 12 ուսուցիչներն Սվետլանա Ասրյանի ուղեկցությամբ եղանք Նորագյուղի Վիտալի Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցում:

Բոլորիս էլ հիացմունք պատճառեց դպրոցական նորակառույց եռահարկ շենքը (բացումը տեղի է ունեցել 2010թ. սեպտեմբերին):

Մեզ առաջին դիմավորողներն առաջին հարկում ստեղծված անկ-

յունում գյուղի 23 նահատակ երիտասարդների նկարներն էին, որոնց առջև խոնարհվեցինք բոլորս: Այնուհետև տիկին Ասրյանը մեզ առաջնորդեց դպրոցի տնօրեն Էրիկ Վարդանյանի մոտ, ով սիրով ընդունեց մեզ: Տնօրենը պատմեց, թե ինչպես է իրենց հաջողվել ծնողներին համոզել և նրանց միջոցներով սովորողների համար ձեռք բերել միատեսակ դպրոցական հագուստ տղաների և աղջիկների համար: Նա համոզված է այն ճշմարտության մեջ, որ դպրոց եկող յուրաքանչյուր երեխայի հետ (լինի լավ սովորող, թե վատ) պետք է աշխատել բարեխղճորեն: Վկայակոչելով մեծերի մտքերը՝ խորհուրդ տվեց երիտասարդ ուսուցիչներին դասապրոցեք կազմակերպել հետաքրքիր և անցկացնել արդի պահանջներին համահունչ: Իսկ դպրոցի հաջողությունների ու ձեռքբերումների մասին համեստորեն լռեց: Այդ մասին էլ մեզ ներկայացրեց միջոցառման նախաձեռնող Ս. Ասրյանը:

Բաց դասերը կազմակերպվել էին 5-րդ և 7-րդ դասարաններում՝ բազմավաստակ ուսուցիչներ Մաղլենա Ջաբարյանի և Մարկ Առտանյանի մոտ: Դասերն անցկացվեցին զեղեցիկ կահավորված ու ձևավորված մաթեմատիկայի կաբինետում: Ամեն ինչ ապահովված էր (տեխնոլոգիական միջոցներ, պատասխաններ, քարտեր, լրացուցիչ նյութեր, միջառարկայական կապեր և այլն)՝ դասապրոցեք լիարժեք և նպատակային անցկացնելու համար:

Առավել հետաքրքիր էր դասը 5-րդ դասարանում: Դասի թեման էր՝ «Ճանաչալու, ուղիղ, հարթություն»: Բարեհամբույր ուսուցչուհին ստուգեց տնային աշխատանքները և ընդհանուր հարցադրումներով ամփոփեց նախորդ թեման՝ հնարավորություն տալով, որ աշակերտն ինքը հանրագումարի բերի իր գիտելիքները, ինքնաբացահայտվի և ինքնահաստատվի: Անցնելով նոր թեմային՝ նա օգտագործեց տարաբնույթ մեթոդներ ու հնարներ և առանձնապես համագործակցային ուսուցման մեթոդների դրույթներ, որոնք էլ նպաստեցին դասի արդյունավետության բարձրացմանը: Մեծ աշխուժություն ու թարմություն բերեց խմբային աշխատանքը: Ուսուցման այս փուլում ուսուցչուհու (աշակերտների դերակատարմամբ) ներկայացրած հեքիաթի հերոսները խնդիրներ առաջադրեցին: Խմբերն արագ անցան ստանձնած խնդիրների լուծմանը: Դասի այս հատվածն այնքան հետաքրքիր ու տպավորիչ էր, որ ևս մեկ անգամ համոզվում ես Մեծն Պատկալի հետ: «Մաթեմատիկան այնքան լուրջ առարկա է, որ երբեմն կարելի է թույլ տալ մեզ այն զվարճալի դարձնել»:

7-րդ դասարանում բաց դասը հանրահաշվից էր՝ «Ամբողջ արտահայտություն և նրա թվային արժեքը» թեմայով: Չնույն ուսուցչուհին խթանման փուլում օգտագործեց մտազրույցի մեթոդ-հնարի դրույթները՝ կենտրոնացնելով աշակերտների

ուշադրությունը: Ստեղծվեց իրավիճակ, որը նպաստեց աշակերտների ազատ մտածողությանը: Առաջադրված էրեք խնդիրներն էլ աշակերտները ճիշտ լուծեցին:

Դասալուսմանը հետո եղան մտքերի փոխանակում, բանավեճ և քննարկումներ: Գնահատելով բաց դասերը մեթոդական նպատակի առաջընթացի տեսանկյունից՝ դասալուսողները եկան այն մտքին, որ իրոք, երկու դասերն էլ ուսանելի են և ընդօրինակման արժանի:

Չամառայնվելով դասալուսողների կարծիքներին՝ բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ասրյանը նշեց, որ յուրաքանչյուր դաս ուսուցիչ ինքնատիպ ստեղծագործությունն է, իսկ բաց դասը՝ ստեղծագործությունների գլուխգործոցը: Շարունակելով իր միտքը՝ նա ասաց, որ երկու ուսուցիչներն էլ դասապրոցեքն անցկացրին բաց դասերի նկատմամբ մանկավարժական պահանջներին համապատասխան, հնարավորինս ռացիոնալ ձևով ցույց տվեցին տարատեսակ մեթոդների համադրությունը՝ զուգակցելով ավանդականի հետ:

Դասերի քննարկումից հետո փոքրիկ էքսկուրսիա կատարեցինք: Եղանք 11 ժամանակակից համակարգիչներով հագեցած ինֆորմատիկայի կաբինետում, նկուղային հարկում տեղավորված ՆՁՊ-ի կաբինետում, ընդարձակ ու լուսավոր արհեստանոցում:

Այնուհետև մեզ հաճելի անակնկալ մատուցվեց: ՄԿԱԳ փոխտնօրեն

Լիդա Չայրիյանը և աշակերտները զեղեցիկ ծրագիր էին պատրաստել, սկզբում՝ մաթեմատիկական դաս, այնուհետև՝ մաթեմատիկական մրցույթ 10-րդ, 11-րդ «ա» և 11-րդ «բ» դասարանների միջև:

Մրցույթն ուղեկցվում էր մաթեմատիկական հասկացությունների, թվերի վերաբերյալ հետաքրքիր պատմություններով: Վերջում, ինչպես նշեց Լիդա Չայրիյանը, հաղթեց մաթեմատիկան:

Կարևորելով նման հանդիպումները՝ բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ասրյանը համոզմունք հայտնեց, որ երիտասարդ ուսուցիչները, ովքեր ավագներից ընդունում են հերթափոխը, պատվով կկատարեն մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործը:

Չեռացանք մեծ տպավորությամբ, առանձնապես երիտասարդները, որոնք խոստովանեցին, որ մասնագիտական ու մեթոդական շատ նորություններ կտանեն իրենց դասերին կիրառելու:

Վերջում ուզում եմ խմբի անունից խորին շնորհակալություն հայտնել Ասկերանի կրթության բաժնի վարիչ Շահեն Ադաբաբյանին և գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանին՝ նման հրաշալի միջոցառումներ նախաձեռնելու համար:

Ռամելա ՂՈՒԼՅԱՆ
ԽՆՁՐԻՍՏԱՆԻ միջնակարգ
դպրոցի մաթեմատիկայի
ուսուցչուհի, փոխպնօրեն

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱՎՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՃՈՒՄ

Ինչ է գեղագիտական դաստիարակությունը, և ինչպես պետք է իրականացնել այն դպրոցում: Մեզ միջ յուրաքանչյուրն, անշուշտ, կարող է տալ գեղագիտական դաստիարակության ճշգրիտ կարգապարզ՝ սովորողների մեջ զարգացնել գեղեցիկի գգացում, ձևավորել գեղագիտական բարձր ճաշակ, արվեստի ստեղծագործությունները, պատմական և ճարտարապետական հուշարձանները, հայրենի բնության գեղեցկությունն ու հարստությունն ըմբռնելու և զննահատելու ունակություն:

Իսկապես, գեղագիտական դաստիարակության գործում առանձնահատուկ տեղ է գրավում գեղեցիկի արվեստը: Ուսուցման գործընթացում գիտելիքների հաղորդումը պետք է զուգակցվի գեղագիտական դաստիարակության հետ:

Այս գործում հատկապես մեծ են հայրց լեզվի և գրականության ուսուցիչների անելիքները: Աշակերտներին խորը գիտելիքներ տալով՝ մենք պետք է ձևավորենք նրանց գեղագիտական, բարոյական համոզմունքները, նպաստենք նրանց զգացմունքների, ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Մենք՝ գրականություն դասավանդողներս, պետք է առանձնակի ուշադրություն դարձնենք այն բանին, որ աշակերտներն ընկալեն գեղագիտական հիմնական կատեգորիաները՝ գեղեցիկը, վեհը, հպարտը, ողբերգականը: Պետք է ձգտենք, որ նրանք հասկանան՝ ինչ է նշանակում իսկական հրճվածք, սեր, ուրախություն, տրտմություն, ատելություն:

Պետք է նրանց բառապաշարը հարստացնենք թևավոր խոսքերով, ասույթներով, դարձվածքներով, հասանք նրան, որ մեր աշակերտները խոսեն գրագետ ու պատկերավոր, յուրացնեն մեր ոսկեդեմիկ հայերենի հարուստ բառապաշարը:

Գաղտնիք չէ, որ այսօր մեր աշակերտները կտրվել են գեղարվեստական գրականության

հրաշալի ստեղծագործություններից: Եվ դա է հիմնական պատճառը, որ նրանց թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքը բավականին կաղուն է: Ոչ միայն մայրենի ուսուցիչները, այլև դասարան մտնող յուրաքանչյուր առարկայի մասնագետ պետք է աշխատի աշակերտների ուղղախոսության կուլտուրայի մշակմամբ, բանավոր խոսքի արվեստի կատարելագործմամբ: Իսկ որ ճիշտ և ուղիղ խոսելն արվեստ է՝ փաստ է: Ցավոք, կան մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և տեխնիկական այլ առարկաներ դասավանդող ուսուցիչներ, որոնք այն կարծիքին են, թե աշակերտների գրական կազմակերպված խոսքի մշակումը, նրանց մեջ գեղագիտական ճաշակ դաստիարակելը միայն հայրց լեզվի ուսուցիչների գործն է:

Դասալուսման կատարելով՝ եկել եմ այն եզրակացության, որ կենսաբանություն, աշխարհագրություն դասավանդող ուսուցիչների դասաժամերը պետք է համեմվեն հույզերով, զգացմունքներով, քանի որ այս առարկաների աղբյուրը բնությունն է: Այս առարկաներից կազմակերպվող գործնական աշխատանքներն ու էքսկուրսիաները մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը դասի նկատմամբ, բարձրացնում նրա արդյունավետությունը, սեր արթնացնում դեպի բնությունը: Աշխարհագրություն դասավանդող ուսուցիչը հատուկ ուշադրություն պիտի դարձնի բնության ընկալման գեղագիտական կողմին: Էքսկուրսիաներ կազմակերպելով դեպի, օրինակ, աշնանային անտառ, աշակերտների ուշադրությունը հրավիրելով նրա բազմերանգությամբ ու տերևաթափին, նրանց մեջ անպայմանորեն կարթնացնենք գեղեցկության, վեհության զգացում: Պատմության ուսուցիչները պարտավոր են կազմակերպել էքսկուրսիաներ դեպի երկրագիտական թանգարաններ, մեր հիմնավոր վանքերն ու եկեղեցիները, պատկերասրահներ: Այսինքն՝ դասանյութի ուսուցումը պետք է նպաստի աշակերտներ

րի գեղագիտական գիտելիքների հարստացմանը: Միասնաբար պետք է լուծվեն աշակերտների կրթության և գեղագիտական զարգացման հարցերը: Պատմություն դասավանդող ուսուցիչների տարբերը պիտի լինի աշակերտներին հայ ճարտարապետական կոթողներին, հուշարձաններին ծանոթացնելը: 2Է՝ որ ճարտարապետական հուշարձանները մեր ժողովրդի գեղարվեստական մտածողության, նրա դարավոր պատմության ու մշակույթի հավերժական վկաներն են:

«Առողջ հոգին՝ առողջ մարմնում», այս բարոյախոսությունը գեղագիտական դաստիարակության բանալին է ֆիզիկական կուլտուրայի ժամերին: Մարմնամարզական ինքնատիպ, սահուն, ռիթմիկ շարժումները միշտ էլ ընկալվում են որպես գեղեցիկի արտահայտություն: Դրանք դաստիարակում են գեղեցիկ կեցվածք, բարոյական, մտավոր և կամային հատկություններ:

Խոսել գեղագիտական դաստիարակության մասին և չչեչտել երգ-երաժշտության դասաժամի դերն այդ գործընթացում՝ ճիշտ չի լինի: Սովորեցնել աշակերտներին ճիշտ կատարել երգը, հաղորդել նրա հուզականությունը, տիրապետել կատարման տեխնիկային՝ նշանակում է աշակերտների մեջ ձևավորել ճաշակ, նպատակաուղղել նրանց դեպի գեղեցիկի աշխարհը: Չաղորդակից դարձնել նրանց հայ երգահանների, երգիչների կախարդական աշխարհին՝ նշանակում է դաստիարակել նրանց մեջ մեծ սեր դեպի մեր մշակույթը:

Այս հարցում պակաս կարևոր չէ կերպարվեստ առարկայի դերը, որը զարգացնում է աշակերտների դիտողականությունը, նրանց համար դառնում դրական հույզերի աղբյուր: Ուսումնական շատ առարկաներ դասերի բովանդակությունը հարստացնելու զգալի հնարավորություններ ունեն:

Ընդհանրացնելով ասվածը՝ ավելացնեն, որ Պատարայի միջնակարգ դպրոցի ֆիզիկա-

յի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ֆիզկուլտուրայի, երգ-երաժշտության ուսուցիչները չեն սահմանափակվում միայն դասագրքի տվյալներով: Կատարված դասալուսմանը վկայում են, որ վերոնշյալ առարկաների ուսուցիչները կարողանում են չոր ու ցամաք տվյալներին հաղորդել իրենց հոգու հույզը, օգտվել բնության հարուստ ներշնչարանից և առաջին հայացքից անհույս թվացող դասերին հաղորդել դրական լիցք, ջերմություն ու նպաստել մատաղ սերնդի գեղագիտական ճաշակի զարգացմանը:

Չայրց լեզվի և գրականության փորձառու ուսուցչուհի Ծովինար Արզումանյանի դասաժամերը զանգի հետ կարծես չեն ավարտվում: Չպարտության, հայրենասիրության, բարոյականության բարձր արժեքներն ուղեկցում են քեզ երկար ժամանակ: Մայրենի անխնայ անվիրյալ ուսուցչուհու դասից դուրս ես գալիս հոգեպես հարստացած, բարոյապես դաստիարակված, քաղաքականապես հասունացած: Բայց որ ֆիզիկայի ուսուցչուհի Լենորա Ավագիմյանի մոտ դասալուսմանը ճանաչողական մեծ ուղեցույց են աշակերտների համար, սա արդեն բավականին հետաքրքիր է: Բնությունը, բնության շարժումը, բազմապիսի ձայները նրա մոտ առկա են: Նյութաբան դառնում է յուրօրինակ թունամյան, Նյութաբան օրենքները՝ կյանքը մշտապես շարժման մեջ պահող տարրեր: Լ. Ավագիմյանը ֆիզիկայի ժամին կարող է արտասանել, երգել, և դա այնքան տեղին է ու հարմոնիկ:

Չեռք ձեռքի տանք ու դպրոցական ողջ կուլեկտիվով մեր աշակերտներին ներարկենք այն վեհ գաղափարը, որ՝ «Գեղեցիկը կիրկի աշխարհը»:

Ռամելա ԱՌՍԱՄՅԱՆ
Պարարայի միջն. դպրոցի հ. Լեզվի
և գրականության ուսուցչուհի,
փոխպնօրեն

ԽՈՐԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ

ԵՐԿՐՈՒՄ ԵՆՔ ԱՊՐԵԼ ՁԵՋ ՆՄԱՆ



Հայրենիքն արժեք է և պարունակում է հայրենասիրությունը, ընկնում են՝ նրա պակասի պատճառով:

Գ. ՆՏՊԵՏ

Մեր ազգային-ազատագրական պատե-

րագմից հետո հազվադեպ է լինում, երբ գյուղական ակումբների պատերը «նեղվում են» հանդիսատեսների առատությունից:

Եվ ահա, Խնամատի մշակույթի տունը այդ օրը՝ նոյեմբերի 21-ին, դժգոհելու առիթ չունեցավ, որովհետև բոլորը գիտեին՝ եկել էին պատկառելու Արցախյան հերոսամարտի նվիրյալներից մեկի՝ «Մարտական խաչ» առաջին աստիճանի ասպետ Սանասար Ծատրյանի անմար հիշատակը:

Հուլի-ցերեկույթը տեղի էր ունենում ԼՂՀ ՊԲ և ԿԳ նախարարությունների համատեղ հրամանի շրջանակներում:

Ներկա էր դպրոցի բանակային շեֆ-կազմակերպության տանկային բրիգադի ստորաբաժանումներից մեկը, որի շարային երթով էլ սկսվում է միջոցառումը:

Բացման խոսքում դպրոցի տնօրեն Զ. Բեգլարյանն ընդգծեց մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հարցում ման միջոցառումների նշանակությունը:

Արցախի խրոխտ օրհներգի հնչյունների ներքո զինվորները ներս են բերում մեր պետական դրոշմը:

«Երազ իմ երկիր հայրենի...» երգի ելևէջ-

ներով բեմահարթակն ամբողջանում է Արցախի պարմանուհիների կամարով.

- 20-րդ դարն էլ ծանր ճակատագրի թելադրանքով հերոսների կարիք ունեցավ, և կրկին երերաց հողը հայրենի,

- Կռվեց Արցախը սուրբ պատերազմով, քանզի զոհասեղանին դրվեցին բազում մատաղ կյանքեր,

- Կռվեց Արցախը, ու ողջ աշխարհը հասկացավ, որ արցախցու բազուկը աստվածային ուժ ունի:

Բեմի վարագույրից մեզ է ժպտում քաջասիրտ բազեն՝ Սանասարը, որը մինչև 88-ը ծառայել է խորհրդային բանակի շարքերում և վաստակել արիասիրտ զինվորի անուն: Հետո ընդունվել էր Երևանի ժողովուրդների հաստիտուտի ֆինանսատնտեսական բաժինը, որի երկրորդ կուրսից տեղափոխվեց հեռակա բաժին՝ հնարավորություն ունենալու մասնակիցը դառնալ ծննդավայրում ծավալվող ֆիդայական շարժման:

Հայեր, միացե՛ք, միացե՛ք, հայեր...

Արցախն է մեզ կանչում, օգնության հասե՛ք...

Ու միավորվեցին հայ զավակները, որովհետև Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի, Դաշքեսանի, Շամխորի և հայաշատ այլ վայրերի մեր հայրենակիցներն արդեն նայել էին մահվան ահասարսուռ դեմքին:

Հիմի՞ էլ լռե՛նք, եղբարք...

Արցախում կրկնվեց Ազատամարտը նոր Ավարայրի...

Բեմը թնդում է հայոց աղջիկների «Արցախ» պարից, իսկ Սանասարի մասին պատմող տեսաֆիլմը ներկայացնում է աչքերից արցունքներ էր քանում... Ի՞նչ անեին նրա հարազատ քույրերը, որոնց աչքի առաջ կենդանի եղբայրն է հրահանգներ տալիս զինվորներին, ոգևորում նրանց դժվարին պահերին: Նրանք լավ գիտեին՝ որտեղ Սանասարն էր, այնտեղ պարտություն չկար, այնտեղ վախկոտ զինվոր չկար:

Երբ Սանասարը նշանակվեց Ասկերանի պաշտպանական շրջանի հրամանատարի տեղակալ, դարձյալ սիրտն ամեն վայրկյան հայրենի ծննդավայրում էր: Հենց լուր էր առնում թշնամու հարձակման մասին, թռչնի թևով հասնում էր Խնամատի դիրքերը:

Առանց ամուսնու վեց զավակ խնամող մայրը միշտ թախանձում էր, որ խնայի իրեն, այդքան համարձակ չլինի: Որդին վատահ պատասխանում էր, որ թուրքի գնդակն իրեն չի հասնի: Եվ ճիշտ էր, թուրքի գնդակը չհասավ, սակայն... եղավ խավար:

Կորուստը ծանր էր, դեռատի կինն ու կենաց ծառի ոստ-դուստըրը այդպես էլ չհասցրին վայելել անհոգ կյանքի թրթռները:

Սանասար Ծատրյանն անցել է փառահեղ մարտական ուղի՝ ձեռք բերելով փորձառու, հմուտ հրամանատարի, համարձակ զինվորի պայծառ անուն: Բացառիկ խիզախության և հերոսության համար նա հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:

Աշակերտների բոլոր կատարումները հաճելի տպավորություն թողեցին ներկայների վրա: Կաքավում են աղջիկները բեմում, փոքրիկները պանծացնում են հերոսի անունը, Դավիթը հնչեցնում է Սանասարի սիրած երաժշտական գործիքը՝ կիթառը, Արգիսեն ասումնքում է.

Հողն ամենուր հող է աշխարհում, Բայց ուրիշ է մեր հողը աշխարհում, Բայց ուրիշ է մեր վերքն աշխարհում, Բայց ուրիշ է մեր երգն աշխարհում, Եվ ուրիշ ենք մենք:

Ոգևորվում է դահլիճը, ոգևորվում են զինվորները հերոսի մեծարժան հրաշալի ելույթներով: Այդ միջոցառումը, թերևս, թերի կլինի, եթե վերջում բեմահարթակը չզբաղեցնեին հայրենյաց պաշտպանները, որոնց հայրենասիրական ու հայրենաշունչ երգն ու պարն իմաստավորում էին մեր ազգի միաբանության, արմատներից չհեռանալու, իրար սա-

տարելու ու հանդուրժելու, հայրենի հողն անսասան պահպանելու գաղափարներ:

Իսկ մեր հերոսը բեմից հետևում էր այս ամենին ու գոհ ժպտում...

Դաժան ճակատագիր, ինչո՞ւ այդպես անգութ եղար... Ինչո՞ւ այսօր մենք չենք մեծարում այն զինվորականին, որ փառահեղ մատաղ կլինի բեմում՝ կուրծքը զարդարված բազմաթիվ մեդալներով ու շքանշաններով, գեներալի ուսադիրներով, հարազատներով շրջապատված հոբելյան նշելիս: Ինչո՞ւ կորցրինք մեր ռազմական գործչին...

Ծանրանում են բազմաթիվ ինչու-ները մեր հոգում, որոնց պատասխանները, սակայն, չենք կարող գտնել:

Հերոսները չեն մեռնում, քանզի նրանց մահն իսկ ազդարարում է հավերժության սկիզբը:

Ավարտվում է հուշ-ցերեկույթը հաղթական շեշտով, և ոչ ոք չի ուզում հեռանալ դահլիճից:

Հնչում են շնորհակալական խոսքեր միջոցառումը կազմակերպողների (դպրոցի տնօրենություն, զինելի Ա. Ավանեսյան, ֆիզդեկ Վ. Բեգլարյան, փոխտնօրեն Գ.Աղաբաբյան, կազմակերպիչներ Լ.Մոսիյան, Հ. Հարությունյան, երգի ուսուցիչ Ն. Սանգասարյան, պարուսույց Ռ. Բեգլարյան), մասնակիցների հասցեին, արտահայտվում են Սանասարի մարտական ընկերները, իր երախտագիտությունն է հայտնում հերոսի քույրը՝ Սոնան՝ հազիվ գուպեղով հոգու՝ կապարի ծանրությամբ ցավը:

Մենք բյուր ենք այսօր, միլիոն ու ավել, Միլիարդ պիտի դառնանք աշխարհում համայն, Մեզ ո՞վ կարող է բերել մահ, ավեր... Մեր հայրենիքը՝ հրով բռնված, Դու, ես, նա պիտի ազատագրենք...

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ
Խնամատի միջև. դպրոցի
հայոց լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՆՈՐԻՅ ԱՎԱԶՄ-Ի ՀՅՈՒՐՆ ԵԻՆՔ

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանը սրբատեղի է դարձել մեզ համար:

Նոյեմբերի 12-ին ԱՎԱԶՄ թանգարանում մեր դպրոցի 1-ին և 5-րդ դասարանցիների երդման արարողությունն էր: Ներկա էին դպրոցի տնօրեն Է. Գաբրիելյանը, զինելի Վ. Համբարձումյանը, դասվար Ի. Ղարախանյանը, դասղեկ Ի. Իսրայելյանը:

Աշակերտների աչքերում հետաքրքրություն կար յուրաքանչյուր անկյան, նկարի, հուշաթանգարակի նկատմամբ: Անչափ հուզիչ էր պահը, երբ լսվեցին դպրոցականների խրոխտ ու հպարտ երդումները. կարծես նրանք այդ անխոս վկաներին վստահեցնում էին, որ ապագան հուսալի ձեռքերում է, և որ հայրենիքի արժանի զավակները կլինեն: Թանգարանի տնօրեն Վ. Գրիգորյանը շնորհավորեց դպրոցականներին՝ «Ձարթոնք» մանկապատանեկան կազմակերպության շարքերն անցնելու կապակցությամբ և մաղթեց, որ դառնան հայրենիքի արժանի զավակներ: Տնօրեն Է. Գաբրիելյանը, շնորհավորելով դպրոցականներին, պարտավորեցրեց, որ միշտ հավատարիմ մնան իրենց երդմանը, լինեն ուսման առաջավոր, հարգեն մեծերին, սիրեն հայրենիքը: Առաջին դասարանի դասվար Ի. Ղա-

րախանյանն անչափ կարևորեց մանատիպ միջոցառման կազմակերպումը ԱՎԱԶՄ



հուշաթանգարանում՝ համարելով այն հայեցի դաստիարակության մի ձև: Անչափ հուզիչ էին երեխաների շուրթերից հնչող՝ հույս ու հավատ ներշնչող բանաստեղծությունները:

Նարինե ՀԱՅՐԻՅԱՆ
Սրբեկ. հ. 12 հիմն. դպրոցի
կազմակերպիչ

Ուսանելի հանդիպում

ԳՅՈՒՂՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՎ Է ՇԵՆ

Ուսանողի օրվա կապակցությամբ ուշագրավ միջոցառում տեղի ունեցավ Եմիշճանի հիմնական դպրոցում: Տողերիս հեղինակի և Արցախի մայր բուհի մագիստրատուրայի ուսանողուհի Անի Հովհաննիսյանի նախաձեռնությամբ հարազատ կրթօջախում տեղի ունեցավ հանդիպում ուսուցչական կոլեկտիվի և հանրապետության բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող մի խումբ ուսանողների հետ:

Եմիշճանի հիմնական դպրոցն այն կրթօջախներից է, որտեղ մասնագետ ուսուցիչների պակասը համալրվում էր Բերդաշենից կամ հարակից բնակավայրերից: Դպրոցը ենթաշրջանում այնքանով է հայտնի, որ այստեղ իրենց առաջին աշխատանքային մկրտությունն են ստացել և հետագայում անուն հանած մասնագետներ, դպրոցի տնօրեններ դարձել շատ-շատերը. Է. Բալայան, Վ. Հայրապետյան, Է. Մովսիսյան, Ա. Զարգարյան, Գ. Մարգարյան և ուրիշներ:

Հանդիպումը հիմնականում նպատակ ուներ մշտաբար պահել ուսանողների մոտ հարազատ կրթօջախի, հարազատ համայնքի նկատմամբ սիրո կրակը: Հենց ուսանողները բուհն ավարտելուց հետո վերադառնալով հարազատ բնօրրան՝ կարող են դրոշակակիրը լինել այն վեհ նախաձեռնության, որ կարելի է բնորոշել այսպես՝ «Գյուղը երիտասարդներով է շենանում»: Ու պատահական չէ, որ ուսանողներից շատերը խոստացան ավարտելուց հետո

վերադառնալ գյուղ և երիտասարդության հետ ուսուսի պայքարել գյուղաբնակ երիտասարդների առօրյան առավել արդիական դարձնելու համար:

Մխաված չեն լինի, եթե ասեն, որ ուսանողական տարիները մարդու կյանքի ամենահետաքրքիր տարիներն են, այդ տարիների հուշերն են ամենավառ կերպով մնում հիշողության մեջ: Պատահական չէ, որ ուսուցիչները վերհիշեցին ջերմ հիշողություններ իրենց ուսանողական տարիներից: Վերջին տարիներին դպրոցը համալրած ուսուցիչները հիմնականում տեղացիներ են: Նրանք էլ, ի դեմս ուսանողների, այն ակնարկն արեցին, որ միանգամայն գոհ են իրենց ընտրությունից և ամեն ինչ անում են հարազատ դարձնելու պատիվը բարձր պահելու համար: Իսկ դա նշանակում է իրենց ողջ եռանդն ու գիտելիքները ներդնել մատաղ սերնդի կրթության և դաստիարակության կարևոր ու պատասխանատու գործին: Ուսանողները հետաքրքիր հուշեր պատմեցին իրենց դպրոցական կյանքից, միաժամանակ շնորհակալություն հայտնեցին ուսուցիչներին. չէ՞ որ նրանց տված գիտելիքների շնորհիվ է, որ կարողանում են վստահորեն քայլել գիտության բարձունքները տանող ճանապարհով:

Հանդիպման մթնոլորտը բավականին ջերմ էր ու խոստումնալից՝ լեցուն կրկին հանդիպելու ակնկալիքով:

Լեռն ԱՍԱԲԵԼՅԱՆ
Գ. Եմիշճան

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ԵՂԵԼ ԵՄ ՆՐԱ ՌԻԱԼՆՈՂՈՒԿԻՆ

Ուսումնական, մանկական և գեղարվեստական գրականության հրատարակության ոլորտներում հայաստանյան շուկայի առաջատարներից է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը, որը հիմնադրվել է 1993 թվականին և իր գործունեության 20 տարիների ընթացքում լույս է ընծայել ավելի քան 3000 անուն գիրք և ամսագիր:

Հրատարակչությունը հիմնադիրն է նաև տարրական և միջին դպրոցական տարիքի երեխաների համար հրատարակվող «Ուրախ գնացք» և «Իմ մոլորակը» մանկապատանեկան ամսագրերի:

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն համագործակցում է բազմաթիվ ճանաչված գրողների, գիտնականների և ուսուցիչների հետ, ունի առաջնակարգ մասնագետներով և ժամանակակից սարքավորումներով հագեցած հրատարակչական մաս, տպարան, «Էդիթ Պրինտ» գրատների ցանց Հայաստանում և Արցախում:

Հրատարակչությունը, մասնակցելով բազում միջազգային ցուցահանդեսների, ձեռք է բերել ընթերցողների լայն շրջանակ ՀՀ-ում և արտերկրում, արժանացել բազմաթիվ բարձր պարգևների:

Ընկերությունը, հրատարակչական գործունեությունից բացի, իրականացնում է նաև ծրագրեր՝ միտված ընթերցանության մակարդակի բարձրացմանը ՀՀ-ում և ԼՂՀ-ում:

Հրատարակչության կողմից լույս ընծայված գրքերն ու ամսագրերը բազմաթիվ են, բազմաժանր և ամենակարևորը՝ բարձր որակով ու նոր մտահղացումներով:

Այդպիսի յուրօրինակ մի գիրք է Անժել Քյուրթյանի հեղինակությունը «Կյանքիս հիշարժան օրերից» հուշագրերը: Այն ներկայացված է հետևյալ բաժիններով՝ ստեղծագործական շարադրություններ, շրջանավարտների վերջին գանգի հրավիրագրեր և ավարտական երեկոերին հղված սրտի խոսքեր, Քյուրթյանի արտասովորական մեծ փունջը՝ ուսանողների գրառմամբ, շնորհավորական հեռագրեր, բացիկներ, ընծայագրեր, նամակներ, նկարներ և այլն:


Հուշագրությունները բազմաթիվ են (այդ է վկայում Ա. Քյուրթյանի պահոցը), սակայն հեղինակի կողմից «Հուշագրություն» ներկայացվել են առավել հիշարժանները:

«Հուշագրքի» Ա, Բ, Գ, Դ բաժինները վերաբերում են Ա. Քյուրթյանի դասախոսական շրջանին (նրանցում ներկայացված են դասախոս-ուսանող հարաբերություններն արտացոլող հուշագրությունները, ուստի այդ բաժիններում հիմնականում խոսում են ուսանողները):

Ե, Ձ. Է բաժիններում սահմաններն ընդլայնվում են, քանզի, բացի ուսանողներից, Ա. Քյուրթյանին բացիկներ, նամակներ են առաքել, գրքեր նվիրել և բացիկներ հղել ավելի լայն շրջանակի մարդիկ՝ հայրենաբնակ թե սփյուռքահայ:

սել Սփյուռքի հայերեն մասնուկում և հայրենի ընթերցողի ներկայացվում են առաջին անգամ: «Վկայում են նկարները» բաժնում տրված են ֆոտոլուսանկարներ, գեղանկարչական գործերի լուսանկարներ՝ դրանց հնարավորինս համառոտ ներկայացմամբ:

Բաժնի բարձրագույն գեղանկարչական գործերի լուսանկարներից են Ա. Քյուրթյանի անգուգական բարեկամ, տոհմիկ երևանցի, ազնվագարմ նկարչուհի Ռեգինա Ղազարյանի՝ Ե. Չարենցի ստեղծագործությունների թեմաներով կերտված «Մորս համար գագել», «Նավզիկե», «Երագ



ԱՆՇԵԼ ՔՅՈՒՐԹՅԱՆ

տեսա. Սայաթ-Նուվեն մոտըր եկավ սազը ձեռքին» և նկարչուհու այլ գեղանկարչական գործերի լուսանկարները, եզակի մի անձնավորության գործեր, ով քաղաքական ծանր դժվարին պայմաններում անձնուրացրոյեն, իր կյանքը վտանգելու գնով հորել, պահել ու պահպանել և վերահաս կորստից փրկել է Մեծն Չարենցի կողմից իրեն վստահված անտիպ ձեռագրերը և հետագայում լույս աշխարհի հանելով՝ խորին ակնածանքով ու հոգու պարտքի կատարմամբ գոհունակությամբ հանձնել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին (1969թ.):

Նշենք նաև, որ «Հուշագրքի» շապիկի վրա Ա. Քյուրթյանի դիմանկարը նույնպես անվանի նկարչուհի Ռեգինա Ղազարյանի ձեռքի գործն է:

Բաժնի ուշագրավ լուսանկարներից են 1983թ. մեր կողմից կազմակերպված գիտագործնական կոնֆերանսի՝ Երևանից ժամանած մանկավարժ-գիտնականների (թվով 12 հոգի, նրանց թվում նաև Ա. Քյուրթյանը) մասնակցությունը հավաստող լուսանկարը և կոնֆերանսի պահին մեծ մանկագիր Գուրգեն Գաբրիելյանի կողմից արված Ա. Քյուրթյանի ճեպանկարը՝ «Մանկավարժական (պետք է լիներ՝ բանասիրական) գիտությունների թեկնածու, դոցենտ Անժել Քյուրթյան» մակագրությամբ:

«Հուշագրքում» տեղ են գտել Գուրգեն Գաբրիելյանի «Ընտիր երկեր»-ի ընծայագիրը՝ «Իմ լեռնաշխարհը եկած հայ պարմանուհուն, հայրենաբնույթ Անժել Քյուրթյանին, եղբոր հավատով ու սիրով» մակագրությամբ և տողերիս համակուրսեցի ու լավ բարեկամ Արկարի Թովմասյանի առաջին գրքուկի՝ «Ցայգալուսի» ընծայագիրը՝ «...Ընդունեցեք իմ փոքրիկ գրքուկը որպես խորին հարգանքի և սիրո շնան: Ի նշան այն մեծ ակնածանքի, որը կարող է տաժել ուսանողն իր ազնվաբարո դասախոսի նկատմամբ, նրա, ով այնպես սիրով մեզ է հաղորդել Մեսրոպյան լեզվի անհուն գաղտնիքները...» մակագրությամբ:

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Անժել Քյուրթյանը, Հայեպից ներգաղթել է Հայրենիք 1946 թվականին: Նա գիտական աստիճանի արժանացած առաջին հայրենադարձ հայուհին է, ուն անվան հետ է կապված ժամանակակից հայերենի բերականության մեջ մակբայներից առանձնացրած և որպես ինքնուրույն խոսքի մաս ընդունած եղանակավորող բառերը՝ հայերենի 9 խոսքի մասերը հասցնելով 10-ի (այն գրաբարում արդեն առանձնացված էր պատկառելի մի անձնավորության՝ ակադեմիկոս Աշոտ Աբրահամյանի կողմից, որը նրա գիտական ղեկավարն էր (նաև տողերիս հեղինակի շատ հարգարժան դասախոսը):

Անժել Քյուրթյանը մի շարք ուսումնասիրություններ է կատարել ինչպես արևելահայերենի լեզվական փաստերի հիման վրա, այնպես էլ արևմտահայերենի լեզվական իրողությունների զուգադրությամբ, գրել գիտամեթոդական, ուսումնաօժանդակ ձեռնարկներ, հեղինակություններ պատրաստել Սփյուռքի հայկական և հայրենի հանրակրթական դպրոցների մայրենիի դասագրքեր, արտադասարանական ինքնուրույն ընթերցանության համար «Ճանաչիր երկիրը քո» և «Մտնենաշարը, որի երեք գրքերն արդեն հրատարակի վրա են: 2011 թվականին լույս տեսավ Ա. Քյուրթյանի «Հայերենի մակբայները» մենագրությունը, որը նրա թեկնածուական ատենախոսության հիմնովին վերամշակված տարբերակն է:

Անժել Քյուրթյանը 1955 թվականից աշխատում է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում (այժմ՝ համալսարան): Նա իր ամբողջ գիտակցական կյանքը անմեացորդ նվիրել է իր սիրած աշխատանքին՝ ուսանողների կրթությանն ու դաստիարակությանը:

Մանկավարժական երկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում նա իր ուսանողներին սրտում և հոգում հարուստ գիտելիքների հետ սերմանել է գեղեցիկի, մարդկայինի, բարության, ազնվության, հայրենասիրության և այլ ազնիվ գագացումներ:

Ուսումնադաստիարակչական անբասիր գործունեության համար, որպես գնահատական, տարբեր առիթներով նա արժանացել է պատվոգրերի ու մեդալների, ըստ որում, վերջինը 2012 թվականին Մանկավարժական համալսարանի հիմնադրման 90-ամյակի առթիվ նրան շնորհված «Մանկավարժական համալսարան 90-ամյակ» մեդալն է:

Մանկավարժական աշխատանքային գործունեության ընթացքում Ա. Քյուրթյանն իրեն դրսևորել է որպես մեր մայրենիին նվիրյալ, բարեխիղճ ու անաչառ մանկավարժ՝ միշտ հավատարիմ ու անզավաճան իր սկզբունքներին: Իր հետ ուսումնառության երկար ուղի անցած ուսանողները սովորելիս և հետագայում՝ մանկավարժական գործունեության ընթացքում առավել հասկանալով ու գնահատելով, վարձատրույն են եղել նրան՝ ըմբռնում հուզիչ տողեր իր իրերով իրենց հայր լեզվի խիստ և միևնույն ժամանակ բարի դասախոս Անժել Քյուրթյանին: Այդ տողերը տեղ են գտել «Հուշագրքում», նրանց թվում նաև տողերիս հեղինակի բացիկներն ու նամակները: Իսկ նրա շրջանավարտներից

շատերն անուն հանած մարդիկ են՝ լեզվաբաններ, պատմաբաններ, գրողներ, հոգեբաններ, մանկավարժներ, արվեստի գործիչներ և այլն:

Հատկանշականն այն է, որ «Հուշագրքում» սրտի և հոգու խոսքերի թվում կան նաև ոչ իր ուսանողներից հղված ավստասների խոսքեր այն մասին, թե իրենց բախտ չի վիճակվել լինել Ա. Քյուրթյանի ուսանողը:

Ուսանողների սրտի խոսքերից մեջբերենք «Հուշագրքում» տեղ գտած պատահիկները: «Թանկագին ընկեր Քյուրթյան, երախտապարտ եմ Ձեզ՝ լեզու սովորելու համար: Զգիտեմ ինչպես արտահայտեմ իմ շնորհակալությունը, սերը, հարգանքը... Համբուրում եմ Ձեր այնքան զգայուն սիրտը և ձեռքերը»: Երեմյան Երմույս, Երևան

Եջմիածնի շրջանի դպրոցներում կատարված դասախոսություններից հետո՝ ամփոփիչ խորհրդակցության ժամանակ, սիրելի դասախոսի ելույթը լսելուց հետո այսպիսի երկտողով է արձագանքել նրա ուսանող շրջանավարտ Օժվեյրա Զարությունյանը:

«Բարե Հուշագրքում ընկեր Քյուրթյան: Այդ ի՞նչ հաճելի մեղեդի հնչեցրիք Ձեր ձայնով: Մի պահ վերացա այս լսարանից, գնացի տարիների խորքը, ուր մոտակից Ձեզ լսել եմ այնքան շատ... Երանի նորից ուսանողուհի լինեի և լսեի Ձեզ կրկին ու կրկին»:

Երևանից Ֆրիդա Թորոսյանը գրում է. «Սիրելի ընկ. Քյուրթյան. եթե իմանայիք՝ ինչքա՞ն կուզենայի լինել Ձեր ամենաառաջին կուրսի ամենավերջին նստարանի ուսանողուհին և լսել Ձեզ: Խնդրում եմ, հայտնեք Ձեր ուսանողներին, որ ակնմեները լավ բաց անեմ և Ձեզ լավ լսեմ, որովհետև Ձեզ լսելը աշխարհի վայելքներից մեկն է: Այդ նրանք հետո կզգան, ես նրանց հավաստեցնում եմ... Համբուրում եմ Ձեզ»:

Իսկ Թունանյանի շրջանի Շնող գյուղից ուսուցչուհի, տողերիս համակուրսեցի Եմմա Քարամյանը գրում է. «... Կհիշե՞ք մեզ, թե՛ կնոռանաք: Եթե տասը տարի հետո մեզ տեսնեք, նույն ձևով կհիշե՞ք... Այնքա՞ն կուզենայի, որ չմոռանայիք»:

Եվ չմոռացավ սիրված դասախոսն իր ուսանողներին, ու 40-50 տարի հետո թղթին հանձնեց իրեն հասցեագրված և խնամքով պահպանված նրանց սրտի խոսքերը, որոնք, իրոք, անկեղծ էին ու անշահախնդիր:

Այդպիսի սրտաբուխ խոսքեր միայն մեծատառով մարդուն կարող են հղել:

Ես հպարտ եմ, որ Անժել Քյուրթյանի նման մեծատառով անաչառ Դասախոսի, անզուգական Մարդու, Մանկավարժի, Քաղաքացու ուսանողուհին եմ եղել և իմ ու նրա բոլոր ուսանողների երախտագիտությունն եմ հայտնում «Էդիթ Պրինտ» հրատարակչությանը՝ նման առաքելության բարության մեջ խստապահանջ և խստության մեջ միշտ բարի մեր սիրելի դասախոսի՝ Անժել Քյուրթյանի հեղինակած «Կյանքիս հիշարժան լեզրից» հուշագրից հրատարակումն համար:

Օգտվելով առիթից՝ շնորհավորում ենք «Էդիթ Պրինտ» հրատարակչությանը՝ հիմնադրման 20-ամյակի առթիվ և ցանկանում հաջողություններ ու նորահոր ձեռքբերումներ:

Գրեղա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

Շնորհավորանք
ԽՈՆԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՁԵՐ
ՄԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ
ՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ



«Դանկոյի սրտի» նման իրենց սրտի, կյանքի գնով:

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում մեծ ավանդ ունի մեր սիրելի գործընկեր Վաչագան Ավանեսյանը, ով այս տարի դարձավ 60 տարեկան:

Օնվել է 1953թ., Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղում, ծառայողի ընտանիքում: 1960թ. ընդունվել է 1970-ին ավարտել է Առաջաձորի միջնակարգ դպրոցը: 1970թ. ընդունվել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը: 1972թ., երկրորդ կուրսից գորակույզվել է խորհրդային բանակի շարքերը, զորացրվել է 1974թ.: 1975-ին տեղափոխվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

1978 թվականից աշխատել է Ծմակահողի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1981թ. նշանակվել է ուսումնական մասով տնօրենի տեղակալ: Աշխատանքի ընթացքում աչքի է ընկել մասնագիտական խոր իմացությամբ, բազմակողմանի զարգացածությամբ: 1988-ից մասնակցել է Արցախի ազատագրական շարժմանը: 1990թ. սկզբներից մեծ աշխատանք է տարել գյուղի պաշտպանական ջոկատի ստեղծման գործում, որին որդեգրվել են գյուղի շուրջ 135 երիտասարդներ: Հետագայում ջոկատը դարձավ «Խաչենի գումարտակի» առաջին վաշտ, որի հրամանատարի տեղակալն էր Կ. Ավանեսյանը: Վաշտը Արցախի ազատագրական պայքարում փայլուն, հաղթական ճանապարհ է անցել: Հետագայում նշանակվեց գումարտակի ծանր զենքերի մասով ջոկի հրամանատար: Լինելով անսահման գրքասեր, տեղյակ ռազմարվեստին և մեծ գորավարների գործունեությանը, սիրելով և լավ ճանաչելով հայրենի բնաշխարհը, պատերազմին աչքի է ընկել իր անմնացորդ նվիրվածությամբ, գործի ստրատեգիական իմացությամբ ու քաջուրությամբ:

1993թ. նշանակվեց Ղազարական պաշտպանության կոմիտեի լիազոր-ներկայացուցիչ Առաջաձորի տեղամասում, որտեղ ծառայեց մինչև նրա լուծարումը: Գյուղը կարճ ժամանակամիջոցում ապահովեց էլեկտրական հոսանքով, մեծ ջանքեր է գործադրել տեղի միջնակարգ դպրոցի, հիվանդանոցի շենքի նորոգման, գործի գեղեցիկ աշխատանքներում:

1993թ. գյուղում բացել է մանկապարտեզ, որի տնօրինությունը իր վրա է վերցրել 5-րդ պաշտպանական շրջանի հրամանատար Նորիկ Դանիելյանը:

Նույն թվականին Ստեփանակերտի պանթեոնից գյուղ տեղափոխեցին ազատամարտիկների աճյուրները, նրանց հուղարկավորեցին Հայրենական պատերազմում զոհված առաջաձորցիների համախորի մոտ: Մտն մեկ տարի ծառայել է Կենտրոնական պաշտպանական շրջանի գործադիր տնօրինում՝ որպես պանագրային զինծառայող:

2002թ. սեպտեմբերից աշխատում է Կիչանի և Ղազանչիի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

Նրա սանեյրն ուսանում են բարձրագույն ուսումնական հաստատություններում: Վ. Ավանեսյանը սիրում է իր աշխատանքը, փայլուն մարդկային բարձր որակներով, անսահման սիրուն է աշակերտներին, ընկերներին և սիրված ու հարգված է կոլեկտիվի ու շրջապատի կողմից: Նա օրինակելի անուսին է, երեք զավակների հայր:

Այրիք ու արարիք, հարգարժան գործընկեր, եղիք միշտ առողջ ու առույգ և անմնացորդ նվիրված թու արդար գործին:

Կիչանի և Ղազանչի Կ. Առաքելյանի անվան միջն. դպրոցի անկախագրական կոլեկտիվ

ԳԵՂԱԴԻՏԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԳԻՏԱՐԻՉԻՑ ԾԵՎԱԾ ՈՒԳԻՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն արդեն մի քանի տարի է՝ կազմակերպում են համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-ցուցահանդես: Այս հայրենամյա միջոցառմանը մասնակից են լինում հազարավոր հայ երեխաներ աշխարհի տարբեր վայրերից: Միջոցառման նպատակն է հայ երեխաների մեջ վաղ հասակից սերմանել այն գաղափարը, որ իրենք Հայկական լեռնաշխարհի, Հայկի, Արամի սերունդ են, իրենք են տերը մեր լեռնաշխարհի:



Միջոցառման կազմակերպիչները նկատել են, որ արտերկրում ապրող հայ երեխաները մեր պատմության իմացությունում թույլ են, իսկ նման ցուցահանդես-մրցույթների շնորհիվ նրանք զգալի աճ են ապրում: Այս տարվա նույնքանի 15-ից երևանի ժամանակակից արվեստի թանգարանում «Արմենիա ընկերության հովանավորությամբ բացվեց «Հայկական լեռնաշխարհից ծնված ուրիշ» խորագրով չորրորդ ցուցահանդես-մրցույթը: Ինչպես միշտ, այս տարի ևս մասնակցեցին երեխաներ Հայաստանից, Սփյուռքից և Արցախից: Ուրախալի է, որ բազմաթիվ աշխատանքներ էին ներկայացրել Ստեփանակերտի, Քաշաթաղի, Մարտակերտի, Հաղուրթի, Մարտունու շրջանների երեխաները: Հաղուրթի շրջանից հիմնականում Տողի արվեստի դպրոցի սաների գեղանկարներն էին, որոնցով մանուկները ներկա-

յացրել են հայրենի երկիրը, իրենց կենցաղը, շրջապատը: Մարտունու շրջանը (15 տարեկան) և Դավիթ Իվանյանը պատմական անցյալի հերոսներից անդրադարձել են Եսայի Աբու Մուսեին, իսկ 13 տարեկան Անի Դազարյանը պատկերել է հայկական

սաներից Սեդա Գրիգորյանը պատկերել է իր տատին («Իմ տատը»), նույնանուն նկար է ստեղծել Ստեփանակերտի 6-րդ դպրոցի սան՝ 14-ամյա Արզիմե Խաչատրյանը («Տատս»): Իսկ Կարեն Ավանցը (Մարտակերտ-13 տ.) «Հյուրընկալ արցախցիներ» և նույն կենտրոնի սան Ալինա Գալստյանը (17 տ.) «Սարերի պես կանգուն» նկարներով պատկերել են իրենց հայրենակիցներին: «Արցախյան պար» նկարով Ստեփանակերտի 11-րդ դպրոցի սան Այոնա Հակոբյանը (13 տ.) նույնպես կարևորել է հայրենի մշակույթը: Իրենց ստեղծագործություններով հատկապես աչքի են ընկնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի Ներքին Գետաշեն գյուղի 2-րդ դպրոցի և Երևանի գեղագիտության ազգային կենտրոնի սաները:

պարը («Պարը»): Միլենա Իվանյանը (15 տ.) պատկերել է բերքահավաք, Լուսինե Աթոյանը (14տ.) «Դեպի աղբյուր» նկարով պատկերել է հայրենի գյուղի կենցաղը: Քաշաթաղի շրջանը ներկայացնում էր Բերձորի արվեստի և սպորտի դպրոցը: Այս կրթօջախի սաները, այդ թվում՝ Քնարիկ Հակոբյան («Սուրբ Գևորգ»-10 տ.), Գայանե Ընթրյան («Խոսուն են քարերը»-10 տ.), Լուիզա Հակոբյան («Սրբազան լավաշ»-12 տ.), Վարսենիկ Ընթրյան («Ազատագրված Քաշաթաղ»-18 տ.), Սյուզաննա Ղահրամանյան («Հզոր ենք մեր գրերով»-13 տ.), Անի Աբգարյան («Մեր գյուղը»-13 տ.), ներկայացրել էին Քաշաթաղի շրջանի բնաշխարհը, մարդկանց, հուշարձանները: Մարտակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի

տության ազգային կենտրոնի սաները: Մրցույթի կազմակերպիչներից Հենրիկ Իգիթյանի անունը կրող գեղագիտական ազգային կենտրոնի տնօրեն Լևոն Իգիթյանը, շնորհավորելով և ողջունելով ներկայացրած, կարևորեց նման ցուցահանդեսների կազմակերպումը հայ մանուկների և պատանիների շրջանում, տեղեկացրեց, որ դրանք լինելու են շարունակական: Ցուցադրված բոլոր աշխատանքները կտպագրվեն արդեն պատրաստվող ալբոմում:

Անահիտ ԸՈՔՈՅԱՆ
Երևանի Փ. Թերլեմեյանի
անվան գեղարվեստի պետական
բուլեջի 3-րդ կուրսի ուսանողուհի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ԼՂՀ Մարտունու շրջանի ներքին շրջանի գյուղերի դպրոցների ուսուցչի թափուր տեղի համար

Ճարտարի հ. 3 հիմնական դպրոց - գինդել՝ 1 դրույթ
Ննգի միջնակարգ դպրոց - մաթեմատիկա՝ 14 ժամ
Կաղարծու միջնակարգ դպրոց - մաթեմատիկա՝ 14 ժամ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 25-26 համարում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայքէջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ մշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),
 2. Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
 3. Անձնագրի պատճենը,
 4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
 6. Սեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
 8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
- Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:
- Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
- Մրցույթները տեղի կունենան դեկտեմբերի 26-28-ը ընկած ժամանակահատվածում. մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

Հայտարարվում է մրցույթ՝ մանկապարտեզի դաստիարակի թափուր տեղի համար

«Մարտակերտի հ. 1 մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի դաստիարակ - 0.625 հաստիք

Դաստիարակի վարձատրությունը՝ ըստ հաստիքացուցակի: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 25-26 համարում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ մշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
 2. Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
 3. Անձնագրի պատճենը,
 4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
 6. Սեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
 8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
- Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ Մարտակերտի հ. 1 մանկապարտեզում:
- Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
- Մրցույթը տեղի կունենա 2014թ. հունվարի 10-15-ը ընկած ժամանակահատվածում. մանրամասն տեղեկությունների համար դիմել Մարտակերտի հ. 1 մանկապարտեզ:

ПРОЩАЛЬНЫЕ МЕЛОДИИ ОСЕНИ

30-ого ноября 2013 года в средней школе N 3 имени А.С. Грибоедова состоялось прощание с дивной осенней порой. Именно волшебница Осень собрала всех нас вместе в этом чудесном зале. Сегодня здесь много гостей: учителя из всех школ города, представители министерства образования, родители, ученики 3-их и 4-ых классов. Уютная обстановка, звучит “Мелодия осеннего дождя” Шопена. На сцену выходят празднично одетые дети -ученики 3 “Б” класса. С осенним прощальным приветом, в багрец и золото одетая, появляется Царица Осень. Глашатай оглашает строгий приказ Царицы-веселиться, петь и танцевать. Неожиданно начинается спор “овошей”, кто из них всего важнее, кто из них всего нужнее. Даже Пугало Огородное участвует в этом споре. Доктор Айболит успокаивает их:



Чтоб здоровым, сильным быть,
Надо овощи любить!

Все без исключения!

В этом году наша арцахская осень была наполнена такими красками и сочными переливами цветов, что вряд ли с ней сможет сравниться другое время года. Костюмы детей отразили всю осеннюю палитру, все золото осени. На фоне этой красоты мы слушали знакомые со школьный лет строки: “Унылая пора! Очей очарованье!”, “Лес, точно терем расписной: лиловый, золотой, багряный!”... Дети читали так искренно, проникновенно...

Цитаты, пословицы, песни, сценки, танец - все в этом час дышало осенью.

Праздник прошёл динамично, насыщенно, ярко, благодаря классному руководителю Агаю Гаянэ, музыкальному руководителю Мкртчян Ларисе и родителям.

С осенью не простились, лишь сказали “до свидания”, потому что чудеса не должны заканчиваться, они должны всегда жить в душах ребят.

ГРИГОРЯН С.
Классовод 4 “А” класса
средней школы N 3 им. А.С. Грибоедова

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 12.12.2013թ.: